ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՍԵՐԳԵՅ ԱՍԼԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, Երևանի քաղաքապետարան

ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հիմնաբառեր. *վարչատարածքային բաժանում, տեղական ինքնակառավարում, տարածքային կառավարում, մարզ, համայնք, շրջան, պետական և համայնքային բյուջե*

Տնտեսավարման արդի փուլում յուրաքանչյուր երկրի զարգացումն ու առաջընթացը անհնար է ապահովել առանց արդյունավետ վարչատարածքային բաժանման և կառավարման: Հոդվածում դիտարկվել է ՀՀ վարչատարածքային բաժանման առկա համակարգը, առաջարկվել է վարչատարածքային բաժանման և կառավարման նոր մոտեցում:

Յուրաքանչյուր երկրի տարածքային քաղաքականության և տարածքային կառավարման կազմակերպման հիմքը տվյալ երկրի վարչատարածքային բաժանման արդյունքում ձևավորված տարածքային միավորներն են և դրանցում կառավարման գործառույթներ իրականացնող տարածքային և տեղական մարմինների ամբողջությունը: Այս առումով, յուրաքանչյուր երկրի զարգացման մակարդակն ու հեռանկարներն ամենից առաջ պայմանավորված են նրանով, թե որքանով են կատարյալ տվյալ պետության պետական (տարածքային) կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերը, ինչպիսին է նրանց միջև փոխհարաբերությունները: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս ժամանակակից իրողությունները, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում աստիճանաբար բարձրանում է տեղական ինքնակառավարման նշանակությունը:

Մեր հանրապետությունում տեղական ինքնակառավարումն անցել է կայացման ու զարգացման որոշակի ճանապարհ: Անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ այն հիմնականում ձևավորված է. ստեղծված են տեղական ինքնակառավարման քաղաքական, տնտեսական, իրավական, ֆինանսական և կազմակերպական հիմքերը: Սակայն առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինները դեռևս չեն կարողանում բավարարել իրենց համայնքների նվազագույն կարիքները, դրանք չեն ձևավորվել որպես միասնական ուժ սեփական շահերը ներկայացնելու ու պաշտպանելու համար, և այդ ամենով պայմանավորված, լիարժեքորեն չեն կատարում իրենց կարևոր դերը հանրային կառավարման համակարգում[1]: Այս առումով, կարելի է նշել, որ տեղական ինքնակառավարումն՝ իր իսկական նշանակությամբ պետք է նոր թափ

[1] Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում / Յու.Մ. Սուվարյան և ուրիշներ, Եր.: «Տնտեսագետ», 2014 («Ամբերդ» մատենաշար): էջ 100:

առնի և զարգանա: Բացի նրանից, որ տեղական ինքնակառավարումը նշանակալից դեր է կատարում բնակչության բարեկեցության ապահովման և ծառայությունների մատուցման գործում, նրան պետք է վերապահվի նաև տնտեսական աճի տեմպերի բարձրացմանը նպաստող ինստիտուտների ստեղծման, դրանց կայունության ապահովման, տարածքների և հետևաբար՝ ամբողջ երկրի մրցունակության բարձրացման խնդիրների լուծումը:

Սակայն մեր հանրապետությունում տեղական ինքնակառավարման ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը արգելակում են մի շարք՝ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններ: Դրանցից են երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, ապակենտրոնացման ռազմավարության և գործողությունների պլանի գիտականորեն հիմնավորվածության աստիճանը, վարչատարածքային բաժանումը և այլն: Այս ամենում առանձնահատուկ է վարչատարածքային բաժանման դերը:

1995 թ. մեր հանրապետությունում անցկացված վարչատարածքային վերափոխումները չունեին բավարար գիտական հիմնավորում, իրականացվեցին չհամակարգված կերպով և չլուծեցին տարածքային կառավարման գլխավոր՝ տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները: Վարչատարածքային բաժանման արդյունքում առաջ եկավ խզում համայնքների, կարելի է ասել, ձևականորեն «կցված» գործառույթների և դրանց իրականացման հնարավորությունների միջև: Այդ խզման պատճառները համայնքների՝ ամենևին ոչ բավարար տնտեսական ինքնուրույնության, ֆինանսական հնարավորությունների, միջտարածքային և ներտարածքային միավորների միջև, այդ թվում համայնք-մարզ, համայնք-համայնք, համայնք-ձեռնարկություն հարաբերությունների առկա անկատար վիճակն է: Հետևաբար՝ վարչատարածքային բաժանումը և տարածքային կառավարման կատարելագործումը այլևս չի կարող դիտարկվել որպես սոսկ տնտեսական հիմնախնդիր, այն պետք է իրականացվի բարեփոխումների բոլոր կողմերի հետ փոխադարձ կապի մեջ:

Այսպիսով՝ վարչատարածքային բարեփոխումների իրականացումը, մեր հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգերի հետագա զարգացման ապահովման տեսանկյունից, դարձել է առաջնահերթ և հիմնական հարցերից մեկը:

Հաշվի առնելով վերոնշյալը, վարչատարածքային համակարգի բարեփոխումների նպատակով, ՀՀ կառավարության կողմից առաջարկվում է երկու մոտեցում. ա) համայնքների միավորման ճանապարհով խոշորացում և բ) միջհամայնքային միավորումների ստեղծում՝ պահպանելով համայնքների լիազորությունները:

Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման օրենսդրական հիմքերը դրվեցին 2005 թ. ՀՀ սահմանադրությունում, որոնք հետագայում ամրագրվեցին նաև 2015 թ. ՀՀ սահմանադրությունում: Հանրապետությունում վարչատարածքային բարեփոխումների, մասնավորապես՝ համայնքների խոշորացման գործընթացի մեկնարկը տրվեց, երբ ՀՀ կառավարությունը 2011 թ. նոյեմբերի 10-ին, արձանագրային որոշմամբ, հավանություն տվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից մշակած «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին», որին հետևել են ուսումնասիրություններ՝ խոշորացվող հա-

մայնքների փնջերի օպտիմալ սահմանման, առաջնահերթությունների նախանշման և ճանապարհային քարտեզի մշակման նպատակով[1]:

Անշուշտ, համայնքների խոշորացումը էապես նպաստում է ռեսուրսների կենտրոնացմանը և դրանց առավել արդյունավետ օգտագործմանը: Անցած տարիների փորձը վկայում է, որ որքան խոշոր և կազմակերպված են համայնքները, այնքան մեծ են դրանց լիազորությունները գործնականում իրականացնելու կարողություններն ու հնարավորությունները: Այդուհանդերձ, համայնքների խոշորացումը, բարդ և բազմակողմանի գործընթաց է: Որտեղ առաջնային խնդիր է դրա իրականացումն ինքնանպատակ չդարձնելը:

Մեր կողմից կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերոնշյալ համայնքային փնջերի կարողությունները բավարար չեն մատուցելու օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում համայնքային ծառայություններ: Այսպես, համեմատելով Դիլիջան համայնքի 2016 թ. բյուջեի եկամուտները և ծախսերը (միայն աշխատանքի վարձատրության մասով) 2015 թ. Դիլիջանի և նորաստեղծ համայնքի մեջ մտած նախկին վեց համայնքների համախմբված բյուջեի եկամուտների և ծախսերի (միայն աշխատանքի վարձատրության մասով) հետ, ապա նկատում ենք, որ էական փոփոխություններ այստեղ չկան: Ընդհանուր եկամուտները 2016 թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել են 20.6 մլն դրամով, աշխատանքի վարձատրության համար կատարված ծախսերն ավելացել են 4.7 մլն դրամով, իսկ ընթացիկ և կապիտալ ծախսերի համար նախատեսվող գումարը՝ տարբեր բնույթի ծառայությունների մատուցման համար կազմել է 471.1 մլն դրամ: Եթե նկատի ունենանք, որ նախորդ տարում միայն Դիլիջան քաղաքային համայնքի համար տարբեր բնույթի ծառայությունների մատուցման համար ծախսվել է 376.6 մլն դրամ, ապա հասկանալի է, որ եթե 2016 թ. Դիլիջանի համար պահպանվի այդ ծավալի ծախսերը, որը կկազմի ամբողջ փնջի գումարի շուրջ 80%-ը, ապա մնացած գումարը, որն ի դեպ 25.4 մլն դրամով պակաս է մնացած վեց համայնքների՝ նախորդ տարվա համար նախատեսված համապատասխան ծախսերի հանրագումարից, չի բավարարի լուծելու Դիլիջան համայնքային փնջի մեջ մտած բնակավայրերի սոցիալ-տնտեսական խնդիրները: Նմանատիպ պատկեր է նաև Տաթև համայնքային փնջում: Ինչը հիմք է տալիս պնդելու, որ նման եղանակով իրականացվելիք համայնքների խոշորացումից առաջացած ֆինանսական ռեսուրսները չեն կարող բավարարել համայնքներին վերապահված լիազորությունների լիարժեք իրագործումը:

Հաշվի առնելով ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում առկա թերությունները, հիմք ընդունելով գրականության մեջ արտահայտված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյանի և տ.գ.թ. Մ. Խ. Չոբանյանի տեսակետը ՀՀ տարածքային կառավարման համակարգի բարեփոխումների ուղղությամբ[2], կարևորելով համայնքների խոշորացման անհրաժեշտությունը, առաջարկում ենք մարզերի փոխարեն ստեղծել շրջաններ, իսկ

[1] Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2013 թվականի գործունեության հաշվետվություն, էջ 12:

[2] Յու.Մ. Սուվարյան, Մ.Խ. Չոբանյան, Տնտեսության տարածքային կառավարում. մեթոդաբանությունը և հիմնախնդիրները, Եր., ԱՌՏ, 2007, էջ 104-110:

տարածքային կառավարումն իրականացնել տեղական ինքնակառավարման երկմակարդակ համակարգով: Ըստ այդմ, առաջարկվում է, որպես տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակ, ձևավորել շրջաններ (ՀԽՍՀ վարչատարածքային բաժանման հենքի վրա), և հատուկ գոտիներ և երեք որևէ շրջանի կազմի մեջ չմտնող խոշոր քաղաքային համայնքներ (Երևան, Գյումրի, Վանաձոր), որոնցում տեղական ինքնակառավարումը կիրականացվի վերոնշյալ քաղաքային համայնքների մասին համապատասխան օրենքներով: Շրջանի կազմի մեջ մտնող համայնքները (քաղաքային, գյուղական) կձևավորեն տեղական ինքնակառավարման առաջին աստիճանը:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման, տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության բարելավման, միմյանց միջև և շրջանների բնակչության առջև պատասխանատվության բարձրացման նպատակով առաջարկում ենք շրջանի ղեկավարի ընտրությունն իրականացնել ուղղակի՝ միամանդատ մեծամասնական ընտրակարգով, իսկ ավագանիներինը՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից առաջադրված ընտրական ցուցակով՝ համամասնական ընտրակարգով, տվյալ շրջանի ընտրական իրավունք ունեցող բնակչության կողմից: Միաժամանակ, ավագանու աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ կլինի ստեղծել խմբակցություններ, ինչպես նաև ավագանու իրավասության հարցերի քննարկման, ավագանու անունից վերահսկողություն իրականացնելու համար՝ մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Այս ամենը, անշուշտ, կնպաստի նաև քաղաքական կուսակցությունների կայացմանն ու զարգացմանը հանրապետության ողջ տարածքում: Ըստ առաջարկվող մոդելի՝ շրջանի կազմի մեջ մտնող համայնքների ղեկավարները, շրջանի ղեկավարի ներկայացմամբ, կնշանակվեն ավագանու որոշմամբ, ինչն անշուշտ կբարձրացնի համայնքի ղեկավարի ինքնուրույնության և պատասխանատվության աստիճանը:

Ըստ առաջարկվող մոդելի՝ կստեղծվեն 30 շրջան, երեք քաղաքային համայնքներ և ևս երկու հատուկ գոտիներ՝ ազատ տնտեսական գոտու կարգավիճակով: Նման վարչատարածքային բաժանում առաջարկելիս հաշվի են առնվել նախկին շրջկենտրոնների և դրանց կազմի մեջ մտնող բնակավայրերի՝ երկար տարիների ընթացքում ձևավորված կապերը, շրջկենտրոնների հետ կապի մատչելիությունը՝ հեռավորության և ավտոճանապարհների առումով, առկա և գործող ենթակառուցվածքները (շրջկենտրոններում դեռևս առկա են և գործում են բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող կառույցները, կենտրոնական իշխանության գործադիր մարմինների համապատասխան ստորաբաժանումները, գրասենյակները), համատեղ գործունեության իրականացման փորձն ու ավանդույթները, որոնք ձևավորվել են դեռևս խորհրդային տարիներին: Ինչ վերաբերում է ազատ տնտեսական գոտիներին, ապա առաջարկվում է դրանք ձևավորել Մեղրու և Ամասիա-Աշոցքի՝ նախկին վարչական շրջաններում, որոնց անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը պայմանավորված են. ա) նշված շրջաններում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի ներկայիս անմխիթար վիճակով և այն արագ տեմպերով վերափոխելու խիստ անհրաժեշտությամբ և բ) բարենպաստ պայմանների առկայությամբ

պայմանավորված՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի Հանրապետության հետ ընդհանուր սահման ունենալու հանգամանքով (ի դեպ, 2017 թ. օգոստոսի 3-ին ՀՀ կառավարության նիստում հաստատվել է «Մեղրի ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ հիմնադրելու մասին որոշումը, որի նպատակն է նպաստել ազատ տնտեսական գոտու մեկնարկի արագացմանը):

Վարչատարածքային նման բաժանման իրականացումը կնպաստի շրջաններում կայուն տնտեսական բազայի ստեղծմանն ու ընդլայնմանը: Նման պնդման համար հիմք է հանդիսանում նշված շրջանների՝ ֆինանսական և նյութական ռեսուրսներով ապահովվածության հնարավորությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2016 թ. ՀՀ համայնքային բյուջեների համամասնությունների պահպանման պարագայում տարբեր շրջանների բյուջեների մեծությունները կտատանվեն 500 մլն դրամից մինչև 4 մլրդ դրամի սահմաններում: Ներկայացված մոդելի պարագայում շրջանների՝ որպես խոշոր ինքնակառավարման մարմինների ֆինանսական հնարավորություններն էապես բարելավվում են: Դրա հետ միասին, էապես ավելանում են այդ շրջանների, ռեսուրսային ներուժի հնարավորությունները՝ գյուղատնտեսական հողատարածքներ, բնական պաշարներ, որակյալ աշխատուժ, որոնց հիման վրա կարելի է նախանշել դրանց հետագա տնտեսական զարգացման ուղղությունները:

Առաջարկվող վարչատարածքային բաժանման արդյունքում ազատված՝ պետական բյուջեից մարզպետարաններին հատկացվող ֆինանսական միջոցները կարող են ուղղվել ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ, որոնք հետագայում կարող են ուղղվել շրջանների տնտեսական զարգացման նպատակային ծրագրերի իրականացմանը:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման, տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության բարելավման, միմյանց միջև և շրջանների բնակչության առջև պատասխանատվության բարձրացման նպատակով առաջարկում ենք շրջանի ղեկավարի ընտրությունն իրականացնել ուղղակի՝ միամանդատ մեծամասնական ընտրակարգով, իսկ ավագանիներինը՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից առաջադրված ընտրական ցուցակով՝ համամասնական ընտրակարգով, տվյալ շրջանի ընտրական իրավունք ունեցող բնակչության կողմից: Միաժամանակ, ավագանու աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով հարկավոր է ստեղծել խմբակցություններ, ինչպես նաև ավագանու իրավասության հարցերի քննարկման, ավագանու անունից վերահսկողություն իրականացնելու համար՝ մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Այս ամենը, անշուշտ, կնպաստի նաև քաղաքական կուսակցությունների կայացմանն ու զարգացմանը հանրապետության ողջ տարածքում: Ըստ առաջարկվող մոդելի՝ շրջանի կազմի մեջ մտնող համայնքների ղեկավարները, շրջանի ղեկավարի ներկայացմամբ, կնշանակվեն ավագանու որոշմամբ, ինչը, անշուշտ, կբարձրացնի համայնքի ղեկավարի ինքնուրույնության և պատասխանատվության աստիճանը:

АСЛАНЯН СЕРГЕЙ

ПУТИ УЛУЧШЕНИЯ СИСТЕМЫ АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗДЕЛЕНИЯ И УПРАВЛЕНИЯ РА

Ключевые слова: *административно-территориальное разделение, местное самоуправление, территориальное управление, область, община, район, государственный и общинный бюджет*

На современном этапе хозяйствования развитие и прогресс каждой страны невозможно обеспечить без эффективного административно-территориального разделения и управления. В статье рассматривается фактическая система административно-территориального разделения РА, предлагается новый подход административно-территориального разделения и управления.

SERGEY ASLANYAN

THE WAYS OF IMPROVEMENT OF ADMINISTRATIVE DIVISION AND GOVERNANCE SYSTEM IN RA

Key words: *administrative division, local self-government, territorial management, province, community, district, state and community budget*

In conditions of the modern market economy development and progress of each country is impossible without effective administrative division and governance.The article outlined the existing system of territorial division in RA and proposed a new approach to administrative-territorial division and governance.

ՄԱՐԵՏԱ ԱՐՇԱԿՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ WEB ԿԱՅՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Հիմնաբառեր. *պահեստ, պաշար, լոգիստիկա, ինտեգրացված լոգիստիկա, տեղեկատվական լոգիստիկա, ծրագրավորում, Web սերվեր, Web կայք, ծրագրավորման լեզուներ, PHP*

Նյութական պաշարների կառավարման գործընթացը օպտիմալ իրականացնելու համար ուսումնասիրվում են լոգիստիկան և դրա կարևորագույն բաղկացուցիչներից՝ պաշարների լոգիստիկան, պահեստավորման լոգիստիկան և տեղեկատվական լոգիստիկան: